

Թեանք և ուսումը շատապուհ են սրբավայրերը, այդտեղ մոռացութեան են տալիս իրանց սովորական հոգսերը, կրած զրկանքները և քանի մի օրով խաղաղ ու հանգիստ կեանք են անցկացնում ամեն մի տեղից, անկիւնից եկած ընտանիքները միասին, մոռանալով աշխարհային բոլոր դառնութիւնները: Այդ սրբավայրերն են, որոնք լցնում են ժողովրդի սիրտը առաքինութեամբ, մոռանալով ամենայն վիշտ: Այդ ուխտատեղիներն են, որոնք ժողովրդի մէջ դարձնում են սիրոյ, միաբանութեան և հաւատարմութեան վեհ գաղափարը, մոռանալով տարւոյ քէն, վրէժխնդրութիւն: Եւ ուխտագնացութիւնն է այն միակ կապը, օղակը, որը յաճախ նորոգում է մեր ժողովրդի բարեկամական յարաբերութիւնները և նրա մէջ մտցնում է հաւատարմութեան սկզբունքը:

Ադօ

ՆԱՄԱԿ ՀՈՒՐՈՒՅ

Օգոստոսի 19-ին

Վերջապէս մեր թեմական դպրանոցի տեսուչը արձակվեց իր պաշտօնից. նախկին տեսչի տեղ վարձված է պ. Եղիշէ Մադաթեան, որը երկու տարի սրանից առաջ աւարտել է Մոսկովյում պատմական բաժինը: Նախկին տեսուչը մնում է, իբրեւ ուսուցիչ լեզուի ուսուցիչ, որին նա արժանի է: Նախկին ուսուցչական խումբը մնում է իր պաշտօնում, անհանգիստ փոփոխութեամբ: Մի քանի խօսք ուսումնարանի մասին:

Մեր թեմական դպրանոցում ուսանում են 4 տեսակի աշակերտներ. լիաթոշակ, կիսաթոշակ, քառաթոշակ և ձրի: Աղքատ մանուկներ, չը կարողանալով լիաթոշակ լինել, կամենում են մտնել դպրոցը և լինել կամ կիսաթոշակ, կամ քառաթոշակ և կամ ձրի: Այդ մանուկները ամիսն անգամ պէտք է ամեն օր սպասեն դպրոցի գաւթում, թէ երբ պէտք է համաձայնվի, կամ մերժէ հոգաբարձութիւնը: Եւ ամիսներէ յետոյ ոմանք մտնում են, ոմանք էլ մերժում են ստանալ: Աղքատը ինչ տեսակ առաջարկութիւն կը լինի այն դպրոցում, հարցնում ենք, ուր աշակերտները մի մասը մտնում է դպրոց մի քանի ամիսից յետոյ, երբ արդէն իր ժամանակին մտածները բաւական անցել են... Պարզ է, որ այդպիսի դպրոցում առաջարկութիւնը կը կաղի, և կաղում էլ է ընկալանալով: Այս ամենը ի նկատի ունենալով, հոգաբարձութիւնը պէտք է ամենայն ջանք գործ դնէ, որ այդպիսի, հակառակադրման կան երեւոյթներ տեղի չունենան: Դպրոցը շատ պակասութիւններ ունի, և մենք լիապէս ենք, որ ներկայ հոգաբարձութիւնը կը մտածէ այդ պակասութիւնների մասին:

Ամսիս 18-ին, կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Հոշու ձիւղի օգտին սիրողների ներկայացում կայացաւ: Խաղաղին է. Տէր-Գրիգորեանցի «Կուր» պատճառը եւ էի», Մօլիերի «Բոնի ամուսնութիւն» և Մ. Տէր-Գրիգորեանցի «Էս էլ քի մօցիքութիւն» պիեսները: Ներկայա-

ցումը յետոյ եղաւ հայ ժողովրդական պարերը: Առանձին շնորհակալութեան արժանի են՝ օր. օր. Ն. Թառուսեանց և Գ. Տէր-Միքայելեանց, որոնք համարեա թէ միշտ մասնակցում են այստեղ արվող ներկայացումներին:

Արցախեցի

ՆԱՄԱԿ ՂՈՒՐԱՅ

Օգոստոսի 17-ին

Դուրայի շուրջը գտնվող հայաբնակ գիւղերից ուշադրութեան արժանի են միմիայն երկուսը՝ Բիւլլար և Խաչմաղ (խաչապէս Խաչմաղ) գիւղերը: Նրանցից առաջինը, որը ընկած է քաղաքից 40 մղոն հեռավորութեան վրա գէպի հարաւ և բաղկացած է մօտ 100 տնից՝ ունենալով շատ գեղեցիկ դէպք փոքրիկ գետակի ափից քիչ հեռու է արքունական կալուածք: Խաչմաղը գտնվում է քաղաքից գէպի արեւելք նոյնպէս 40 մղոն տարածութեան վրա. նա ընկած է մի տափարակ տեղ և բաժանվում է մի ուրիշ գետակով երկու մասի. այդ գետակի մի ափին ընկնում են հաւաքը՝ մօտ 30 տուն, իսկ միւս ափին թուղբերը՝ մօտ 60 տուն: Այդ գիւղը ժառանգական կալուածք է և պատկանում է Ղազարեաններին:

Բիւլլարը և Խաչմաղը միայն անուամբ են հայկական գիւղերի շարքն ընկել, նրանք իսկապէս հեռու պիտի մնան այդ կոչումից, չը նայած որ երկուսն էլ ունեն մի մի եկեղեցի և դպրոց: Ժողովրդի դրութիւնը շատ և շատ անխախտն է՝ հայոց լեզուն աչքի առաջ ունենալով:

Բիւլլարի եկեղեցում, որը այժմ վերանորոգվում է և անցնելու մարտին նորից է օծվել, առաջ էլ, այժմ էլ ժամերգութիւն շատ սակաւ է լինում՝ միմիայն պատկ, մկրտութիւն կամ ննջեցեալ եղած ժամանակ, և դա համեմատած Խաչմաղի հետ՝ դու փառքի է արժանի, որովհետեւ վերջինում այժմ քանակաւ չը կայ, (անցեալ տարվայ այստեղի քահանայի պապնութիւնից յետոյ՝ այդ տեղի քահանայութեան պաշտօնը վախում են ընդունել), ամիսներով ժողովուրդը չէ լսում Աստուծո խօսքը, թէ և պէտք է ուղիղ խոստովանած, լսածից նա ոչինչ չէր հասկանում:

Դպրոցները, որոնց համար Բազումի Մարգարիտական ընկերութիւնը մինչև անցած 89—90 ուսումնական տարին ուղարկում էր տարեկան մի որոշ գումար, (Բիւլլարի համար—300 ռուբլի, իսկ Խաչմաղի—50 ռուբլի), և որոնց կառավարութեան պարտքը քահանաների վրա է, նոյնպէս գտնվում են վատ դրութեան մէջ: Խաչմաղում՝ քահանայ չը լինելու պատճառով՝ դասատուութիւն ամենեւին չը կայ, իսկ Բիւլլարում նոյնպէս կարելի է չեղած հաշիւ՝ այդպիսի անսխալանքի դրութեան մէջ է այդ դասատուութիւնը: Դպրոցը իր համար առանձին չիւնութիւն չունի, դրա տեղը ծառայում է քահանայի ընկալարանի սենեակներից մէկը, որտեղ գիւղացի երեխաները հաւաքվում են և կարդում են՝ առանց միտքը հասկանալու, գրում են՝ առանց օրինաւոր գիր իմա-

նալու: Հասկանալի է, որ այդ դաստան անուն կրող սենեակը շատ պակասութիւններ ունի: Աշակերտների թիւը 20-ից անց չէ լինում ամբողջ տարվայ ընթացքում:

Թէ այսպէս թէ այնպէս, այդ երկու գիւղերի հայ ժողովուրդը կարօտ է մեծ և լուրջ ուշադրութեան, հակառակ դէպքում կարող է շատ վատ լինել, որը բնական ցանկալի չէ: Մեծ դեր կարող է խաղալ այդ գործի մէջ գիւղական քահանան, բաւական է, որ նա քիչ տեղեկութիւն ունենայ մանկավարժական աշխատից և լինի քիչ-շատից համակրելի անձնաւորութիւն: Գիւղացիք իրանց համակրական սովորութեան համաձայն նրան կը լսեն ամեն բանի մէջ և կը սիրեն:

Գիւղացիք իրանց նիւթական դրութեան վրա զանգատվել չեն կարող, հողը բերրի է և նրանց աշխատանքն իդուր չէ կորչում: Նրանց գլխաւոր պարագամբը երկրագործութիւնն է, իսկ Խաչմաղում, բացի երկրագործութիւնից, պարագամ են և զինեցործութեամբ՝ պատրաստելով բաւական լաւ զինիւններ, որոնք անցնում են Բազում և Թիֆլիս:

Լ. Մ. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» խմբագիր, Գրիգոր Արծրունի, այսօր, հինգշաբթի երեկոյեան, ճանապարհ է ընկնելու գէպի երեւանէն Նահանգը, իսկ նրա բացակայութեան ժամանակ, խմբագրութեան առաջարկութեամբ և կառավարութեան հաստատութեամբ «Մշակի» ժամանակաւոր խմբագիր լինելու է մեր մշտական աշխատակից պ. Գովհանէս Տէր-Մարկոսեան:

Ֆինանսների միւնիստր պ. Վիշնգրադսկի ըստ պատվում է քաղաքում այսօր, երեկոյեան: Պ. մի-նիստրը պիտի իջնի կառավարչապետի պալատում:

Լսում ենք, որ Սուրամի տունները հանդիսաւոր կերպով կը բացվի սեպտեմբերի 15-ին:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի թեմի զանազան դպրոցներում վարժապետական խմբերը դեռ չեն կազմված:

Սօտնիկ Պէշյով, որով մի ժամանակ այնքան զբաղվեցին ուսուցիչ լրագիրները, և որի անձնաւորութեան և ձիւ ուսման մի քանի ժամանակ առաջ հեռագրական գործակալութիւնը այնքան առատ տեղեկութիւններ էր հաղորդում, այժմ Թիֆլիսում է, և այստեղից պէտք է ուղարկվի, ի հարկի ձիւ, գէպի Անդրկասպեան երկրի:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց «Начальная книга русского языка» դասագիրքը, որ կազմել է հայոց դպրոցների համար պ. Գ. Թու-մանեան: Մեր դպրոցներում ուսուցիչ լեզուի օրի-

նաւոր դասագրքեր չառ քիչ կան: Մինչև այժմ էլ այդ դասագրքերի կազմողները աւելի փոքր աշխատելու մտքով են եղել ոչնչորված, ըստ թէ մի օրինաւոր և մանկավարժական պահանջներին համապատասխանող դասագիրք պատրաստելու մտքով: Եւ հէց այդ պատճառով, մանաւանդ առաջ, ուսուցիչ լեզուի բաղմաթիւ դասագրքեր էին գործածվում հայոց դպրոցներում: Մենք չը գիտենք, թէ էլ միայն ուսումնական խորհուրդը եղած դասագրքերից որն է ընդունել հայոց դպրոցներում, սակայն որն էլ ընդունած լինի, այդ մի և նոյն է, նրանք ամենքն էլ բաւական թերութիւններ ունեն: Թէ որքան արժանաւոր կամ անարժան է այժմ լայ տեսած նոր դասագիրքը, որի հրատարակչն է «Մայրենի» լեզուի կազմող պ. Նիկողայոս Տէր-Ղևոնդեան, այդ մենք յանձն չենք առնում որոշել, և թողնում ենք իրանց մանկավարժներին:

Այսօր, հինգշաբթի, քաղաքային թատրոնում սկսվում են օպերային ներկայացումները: Հրատարակած աֆիշաներից երևում է, որ արտիստական ընկերութիւնը այս տարի մտադիր է ներկայացումներ տալ երեք լեզուներով՝ ռուսերէն, ֆրանսերէն և իտալերէն: Գերաւանները գրեթէ բոլորն էլ անմասթ են Թիֆլիսի հասարակութեանը, բացի պ. Վանդերիկից և տիկին Վասուլից, որոնք այս տարի պիտի խաղան Թիֆլիսում: Թէ որքան բաւականութիւն կը տայ Թիֆլիսի հասարակութեանը շերտ-լեզուներն օպերան, ցոյց կը տալ ապագան: Ըստ սովորականին, այսօր, առաջին օրը, կը ներկայացվի «Жизнь за Царя» օպերան:

Թիֆլիսի «Տարաղ» հանդիսում հետեւեալ լուրն է տպագրվել. «Ընդունից ստացանք մի ժամանաւոր նամակ, ուր ի միջի այլոց հաղորդում են մեզ, որ Եղիստիսի փոխարքայ հայազն Նուբար փաշան գրել է պարոնց նախկին դեսպան նշաւաւոր դիւլոմատ հայազն Մեղրում-խանին, թէ արեւօք չի ցանկանայ սա մտնել տաճկաց ծառայութեան մէջ այն դէպքում, երբ ինքը՝ Նուբար փաշան թողնելու լինի Եղիստիսի փոխարքայութիւնը և ստանձնելու Տաճկահայաստանում ալ պաշտօն: Այս մասին մանրամասն միւս անգամ:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ նկատաւորութիւնը. «Այսօր առիթ ունեցանք հանդիպելու իր տեսակով մի նոր վախճաւուր, որի մասին անհրաժեշտ ենք համարում տեղեկութիւն տալ, որ պէս դի հասարակութիւնը իմանայ թէ մեր կողմից անգամ անգամ պատրաստ հայ մշակի կօպէլները ապահով չեն իր գրպանում: Ցայտից չէ, որ տաճկահայաստանցի մշակ դասաւարդը յայտնի հանգամանքների նորոգել մեծ դժուարութիւնով է կարողանում հասցնել իր կօպէլները իր հեռաւոր ընտանիքի անդամներին: Այժմ առաջ ունենալով այդ հանգամանքը, այժմ Թիֆլիսի եկել մի բաւարարող երիտասարդ վախճաւուր, որի միակ պա-

տան կամարի վրա արձանադրութիւնը տպագրուցանում է, թէ դեռ 1682 թվին Թիֆլիսի արհեստաւորները օճեցին որոշ կազմակերպված համընթակա միութիւններ: Սրանք պարտաւորվում են առաջ էլ միայն միաբանութեանը տարեկան մի չարէք մոտ ամեն մի դուքանից. իսկ միաբանութիւնը պարտաւորվում է ամեն տարի նաւակաթիկ օրերը յիշել պատարագի ժամանակ համընթակա նրանց հանդուգեալներին 2): Իսկ այս դարու ընթացքում գրած յիշատակարանների և շարժողութիւնների մէջ գտնվում են այնպիսի տեղեկութիւններ, որոնք պարզ ապացուցանում են, թէ համարեա կովկասեան բոլոր քաղաքներում բաւական տարածված էին: Հետաքրքիրն այն է, որ համընթակա կամ էսնաֆական միութիւնները գլխաւորապէս հայ արհեստաւորներն էին: Հայերից յետոյ առաջին տեղը ընդունում էին թուրքերը. իսկ վրաց տարրը արհեստաւորների մէջ շատ չուշին էր:

Ինքն ըստ ինքեան հարց է ծագում, թէ ինչ աստիճանի համընթակա միութիւնները ինքնուրոյն ծագում ունեն: Հաւանելով այն կարծիքն է յայտնում, թէ համընթակա տեղացի ժողովրդի կեանքից ծագած ինքնուրոյն հաստատութիւններ

են: Եւ այս կարծիքը շատ հաւանական է: Եթէ ենթադրենք, թէ նրանք Հռոմից մեղ թողած հաստատութիւններ են, այն ժամանակ կը մնայ հարց, թէ ինչու մեր համընթակա միութիւնների կազմակերպութիւնն այն չէ, ինչ որ էր հռոմէականացի կօլլեգիաների կազմակերպութիւնը: Բացի սրանից համընթակա միութիւններ, ինչպէս վերև յիշեցինք, գտնվում էին և Պարսկաստանում, որոնք չեն ենթարկված հռոմէականացի քաղաքակրթութեանը:

Գուցէ բիւզանդացիք տարածեցին միութիւնները Հայաստանում: Այն ժամանակ կը մնայ անբացատրելի հարց, թէ ինչպէս նրանք կարող կը լինէին ստեղծել համընթակա համար պարօն սրբեր: Բիւզանդացիք միշտ աշխատում էին մեր կրօնը ճշգրիտ և նրանք չէին կարող մեր եկեղեցականներին համեմատ սրբեր և տոնախմբութիւններ նշանակել մեր համընթակա միութիւնների համար: Միջնադարեան եւրոպացիները ևս չէին կարող առանձին համընթակա ստեղծել մեր երկրի համար, քանի որ իտալիկների պատերազմների ժամանակ նրանց ցեղական միութիւնների կազմակերպութիւնը դեռ կառարկելաւորված չէր: Բացի սրանից եւրոպացի յարաբերութիւններ մեզ հետ այնքան զարգացած չէին, որ նրանց քաղաքակրթութիւնը կարողանար հինուրով փոփոխել մեր արհեստաւորների կեանքը և նրանց կազմակերպութիւնը: Իսկ ինչ վերաբերում է տաճիկներին, սրանք մեր երկրից հեռու ժամանակ կիսավայրենի, թափա-

ռող ցեղեր էին: Նրանք, հետեւաբար, հազիւ ունէին մի այնպիսի զարգացած քաղաքակրթութիւն, որ կարողանային մեր ազգային, տնտեսական և բարոյական կեանքին նոր կազմակերպութիւն տալ: Տաճիկները, ընդհակառակը, երկրի տեղեկութիւն, ջնջում էին ինչ քաղաքակրթութեան հետքեր: Ինչպէս դարերի փորձը ցոյց տուեց, տաճիկ տարրը ոչ թէ աշխարհայէն, այլ աշխարհաւեր ժողովուրդ է: Ուրեմն շատ հաւանական է, որ մեր ընկի ժողովուրդը ի ընէ անտի իր առօրեայ պահանջների և տնտեսական կեանքի համար ստեղծել էր համընթակա նախապետական միութիւնները: Այս կամ այն պետութիւնների, երկրի նուաճելուց յետոյ, օգուտ էին քաղում դարերից ի վեր գոյութիւն ունեցող հաստատութիւններից իրանց վարչական և քաղաքական նպատակների համար: Եթէ օտարադրի պետութիւնները ներգործած էլ լինեն համընթակա միութիւնների վրա, նրանց կարգադրութիւնները շուտով կը վերաբերվեն միութիւնների արտաքին, քան թէ ներքին կազմակերպութեանը: Ինչ և իցէ այն հարցը, թէ արեւօք օտարադրները ներգործել են, թէ չեն ներգործել համընթակա միութիւնների ծագման և կազմակերպութեան վրա, մեր տեսակետից կը մնայ առանց լուսաբանելու: Գծադրաբար, մեր պատմագիրները այս հարցի մասին չեն թողել մի որ և է տեղեկութիւն: Տեղեկութիւն չենք գտնում նոյնպէս և մեր օրէնսդրական ժողովածուների մէջ, ինչպէս է, օրինակ, Միսիթար Գօշի ժո-

ղովածուն, ուր մի բաւական չէ յիշված համընթակա միութիւնների մասին:

Մեր համընթակա միութիւնները միշտ կառավարվել իրանց աղաքներով—սովորական իրաւունքը շատ անգամ նրանք բոլորովին չեն մտածել զանցկացնել իրանց կանոնադրութիւնները և դաժները: Այս է պատճառը, որ դրաւոր տեղի կութիւններ ընդհանրապէս չունենք մեր ամառափութեան ներքին կանոնների վերաբերմամբ: Թրուր, գտնվում են գրաւոր օրհնութեան թղթեր և ուրիշ տեսակ պատմագրքեր, արհեստաւորների փոխադրած յարաբերութիւնների վերաբերմամբ բաց նրանք ուղիղ և որոշ կանոնադրութիւններ վրում է արեւմտեան միջնադարեան ցեղական միութիւնների կեանքում: Գարեցից ի վեր նրանք գոյութիւն ունէին, բաց գրաւոր կանոնադրութիւնները (statut) որովում էին նրանց ոչ առաջ, քան XII և XIII դարերը 1): Եթովի 2) այս երկուքը բացատրում է նրանով, որ մինչև այդ ժամանակ ներքին արհեստները և արհեստաւորների դասակարգը ընտանեկան դրութեան մէջ էին: 1258 թվին Էտրէն Բուսի ժողովից Գալիզի արհեստաւորների գլխաւորներին միութիւնների ներքին կեանքը և կազմակերպութիւնը

1) Maurer T. II, § 262, Stieda, p. 23.
2) Die Strassburger Tücher-und Weber zunft Urkunden-und Der stellung, p. 388—389.

autres lieux de l'orient, edition 1830, vol. XXXVI, p. 156—158.
2) Тифлиские Амагары, изъ записокъ Юрія Акхвердова, стр. 8—9.

18